

Մեռածները Դաստիարակում Եւ Անմահացնում Են Ապրողներին

Գրեց ԳԷՈՐԳ ԽՐԼՈՐԵԱՆ

Այս տարի թուրք եղեռնագործների նախաձեռնած ցեղասպանութիւնը Հայ ժողովուրդն ու նրա բարեկամները յիշատակում են երկու խումբ հակադիր երեւոյթների ներգործութեան պայմաններում:

Այսօր դեռեւս թարմ են Սումգայիթի, Աղտամի, Կիրովպատի, Նախիջևանի, Բաքուի, Շուշիի եւ այլ վայրերի մէջ տանջամահ առուած Հայ մանուկների, կանանց, ծերերի ու երիտասարդների շիրիմները: Հայ ժողովուրդը դեռեւս չի սթափուել անարդարացի մեղադրանքների, Ստանլինեան պիտակաւորումների եւ չհասկացուած շինելու հասցրած բարոյական, հոգեբանական ու սոցիալապական ցնցումներից: Իրավաբանական, քաղաքական, հոգեւոր ու բարոյական երկարատեւ այդ երկրաշարժին (որը յաճախ զուգակցուած էր տանկերին, հրասայլերին, ուղղթիռներին եւ զինուած ջոկատներին) յաջորդեց Դեկտեմբերեան ֆիզիքական ահաւոր ու կործանիչ երկրաշարժը, որը խլեց տասնեակ հազարաւոր կեանքեր ու մեծ դժուարութեամբ ստեղծուած նիւթական, հոգեւոր ու բարոյական մշակոյթի արժէքներ: Ֆիզիքական երկրաշարժը աւելի խորն ազդեց, ոչ միայն այն պատճառով, որ յաջորդում էր բարոյաբաղաւորական երկրաշարժին, այլեւ այն պատճառով, որ այդ արհաւիրքը կապուեց ոչ նուազ ահաւոր բարոյական ցնցումների հետ: Պարզուեց, որ չինարարական աշխատանքի պատասխանատուների շահամուտութեան, կաշառակերութեան եւ Հայ չինարարների սուրբ աւանդութիւններից շեղուելու պատճառով Հայաստանում չինութիւնները ծայր

աստիճան անվորակ են: Դրանք թղթի վրայ երկրաշարժից պաշտպանուած էին, իսկ իրականում՝ անդիմացկուն: Պարզուեց նաեւ, որ մի շարք մասնազէտներ եւ ոչ մասնազէտներ 1988 թ. Ապրիլից տարբեր առիթներով նախագուշակել են արհաւիրքը եւ նախագուշացրել պատկան մարմիններին, որոնք անտարբերութեամբ են անցել այդ գրութիւնների կողքով: Աղէտեալներին ցոյց տրուող փրկարարական, բժշկական, հոգեբանական, նիւթական եւ այլ բնոյթի օգնութեան պատասխանատու վերահաս մարմինները բացայայտեցին իրենց անճարակութիւնը: Նրանց թոյլ տուած անհասկանալի սխալները եւ հասկանալի պատճառներով ծաւալուող կաշառակերութիւնը, տուժածների համար ուղարկուած նիւթերի իւրացման փաստերը խորացրին երկրաշարժի ազդեցութիւնը: Եւ վերջապէս բանտերից հասնող Հայ երիտասարդների ինքնապաշտպանութեան ու բողոքի ձայնը ուժեղացնում է Հայ ժողովրդի ու նրա բարեկամների տրամադրութեան ելեւէջները: Հայ ոգին ճգմուած է նաեւ գաղթականների ու արտագաղթողների բանակի շարքերի խտացմանն ի տես: Այս ֆիզիքական, բարոյական, իրաւական, քաղաքական եւ հոգեկան երկրաշարժների ներգործութիւնը սահմանափակելու, սանձելու վճռականութեամբ այսօր Հայը յիշատակում է մարտիրոսացած իր հերոսներին:

Հայկական ամպամած երկնակամարում կան նաեւ պայծառ ու լուսաւորուած տարածքներ: Այսօր Հայ ժողովուրդը հպարտանում է քաղաքական, գաղափարական ու իրաւական դաստիարակութեան ասպարէզներում իր ձեռքբերումներով: Նրա կամքն ու վճռականութիւնը օր ըստ օր է ուժեղանում է նուաճ-

ուած միասնականութեան ոգով: Պայքարի ելեւէջների բովում Հայ ժողովուրդն աւելի կազմակերպեց: Նա աւելի ամրապնդեց իր լուստեսութիւնը, նպատակասլաց գործելու կարողութիւնն ու ինքնամոտաց գոհարեւելու առաքինութիւնը: Ինչպէս պատմական փորձը ցոյց է տալիս արհաւիրքը ծնում է ինչպէս ցաւ ու դժբախտութիւն, այնպէս էլ կամք ու բռունցք փերեսթրոյթայի պայմաններում ժողովրդական կամքն ու մտածողութիւնը ստանում է արտայայտման հնարաւորութիւններ: Հայոց արդի տարերային դեմոկրատան ժողովրդական շարժումը որոշակիորէն ներգործում է Հայաստանի կուսակցական, պետական, տնտեսական, ընկերային եւ էկոլոգիական կենսագործունէութեան վրայ: Աշխարհի գրեթէ բոլոր ժողովուրդների ղէպի Հայաստանն ու հայութիւնը ցուցաբերած խորը հետաքրքրութիւնը, սէրը, բարոյական եւ նիւթական օգնութիւնը կոփեց Հայու ազգային արժանապատուութիւնը, ինքնավստահութիւնը, նրա պայքարելու եւ յաղթելու կամքը, իր ազգային արժանիքների միջազգային հնչեղութեան նկատմամբ հաւատը եւ նրա ինտէնսիտետալիտական ոգին: Մարդկային ընտանիքի գրեթէ բոլոր անդամների այդ վերաբերմունքի մեջ Հայը տեսաւ շարի ու ջարդարարի ղէմ հանդիման կանգնած բարու եւ մարդասիրութեան յաղթարշաւը: Սոյն բոլոր դրական գործոնների առաջացրած դիտակցութեամբ Հայն այսօր յիշատակում է Օսմանեան եաթաղանում սպաննուած իր զաւակներին ու նրանց պատգամը փոխանցում ողջ մարդկութեան: Այդ պատգամը յատկապէս բովանդակալից է, որովհետեւ արտայայտում է ազգային դիմագծով ապրելու, ազատութեան, հաւասարութեան ու եղբայրութեան գաղափարներին հաւատալու, Հայ ժողովրդի Հայ հոգի միասնականութիւնը յաւերժացնելու վճռականութեամբ տողորուած միլիոնների կամքը: Այդ պատգամն այսօր յատկապէս իմաստալից է, քանի որ նրանց կրողների յիշատակը թարմացուած է Սումկայիթեան ղէպերով: Մարդկութիւնն իրեն ապահով չի զգայ, եթէ աշխարհի վրայ մնայ ցեղասպանութեան ուձալ հաւանականութիւնը:

Գեղասպանութեան հնարաւորութեան վտանգը շեշտուած է, քանի որ այն օգտագործուած է որպէս միջազգային եւ ազգամիջեան յարաբերութիւնների դիւանագիտական գործիք: Օսմանեան լծի տակ հիւժող ժողովուրդներին իրենց ենթակայութեան տակ պահելու համար ցեղասպանութեան հնարաւորութիւնը սպառնում էին ինչպէս օսմանցիներ, այնպէս էլ եւրոպական մեծ տէրութիւնները: Օսմանեան պետութիւնից փորձում էին օգտուել նրան ազատագրական շարժման հրահրման հեռանկարով վախցնելով: Ազատագրական պայքար մղող ժողովուրդներին իրենց կողմն էին ձգում թուրքական ջարդերի հրահրմամբ ու այն վերացնելու կեղծաւոր խոստումներով: Սումկայիթեան ղէպերը ապացուցեցին այդ միտումների շարունակականութիւնը:

Մարդկութեան նոր պատմութեան զարթոնքը սկսուեց եղբայրութեան, հաւասարութեան, ազատութեան եւ արդարութեան հաստատման խոստումներով: Բայց այսօր, երրորդ հազարամեակի շէմէն, պատերազմների, բռնատիրութեան, ցեղասպանութեան եւ մեծապետական եսամոլութեան առկայութիւնը ապացուցում է, որ բազմահազար ազատատենջ, մարդասէր, գաղա-


փարապաշտ նորարարների արիւնը դեռեւս բաւարար էր եղել, որպէսզի այդ խոստումները գործնականորէն մարմնաւորուեն: Այս պատճառով էլ այսօր երբ յարգում ենք ցեղասպանութեան զոհերի յիշատակը, միաժամանակ կոչ ենք անում աշխարհի բոլոր ազգերին եւ յատկապէս այն ուժերին, որոնք իրենց համարում են վերոյիշեալ գաղափարների ջատագովներ, որպէսզի իրենք իրագործեն այդ առաջաւոր իտէլաները եւ հետեւին, որ ուրիշներ էլ գործադրեն դրանք: Նրանց մի անգամ եւս պէտք է յիշեցնել, որ այդ սկզբունքները, գաղափարները չպէտք է դառնան իրենց իսկ սեւ գործերը սիրամարգի փետուրներով քողարկելու միջոց: Կարիք չկայ յիշեցնելու, որ պատերազմները, պատմական անարդարութիւնները, բռնութիւնները, ռազմաքաղաքական համախմբումները, ջարդերն ու կամայականութիւնները կը վերանան, եթէ բառային այլասիրութիւնն ու մարդասիրութիւնը կը վերածնունեն առարկայական ու մարմնաւորուած ամենօրեայ յարաբերութեան:

Արդէն Դարդ անգամն է, որ կրկնում ենք, որ թուրքական ցեղամոլութիւնը, ազգայնամոլութիւնը, պանթուրանիզմը, պանթուրիզմը եւ պանիսլամիզմը Հայերի ցեղասպանութեան հիմնական պատճառներն են: Նոյնպիսի համոզեցուցիչ հիմնաւորուածութեամբ մենք աւելացնում ենք, որ ցեղասպանութեան այդ հաւանականութիւնը իրականութիւն չէր դառնար, եթէ մրցակցող մեծ ընկերութիւնները իրենց ռազմա-քաղաքական ու տնտեսական շահերի համար չփորձէին շահագործել թուրքերի ու նրանց տիրապետութեան տակ հիւժող ժողովուրդների յարաբերութեան սեւ ու դժուար կողմերը:

Հայ եղեռնագիտութեան արդի փուլի հրամայականն է ոչ միայն բացայայտել ցեղասպանութեան պատճառների համակարգը, իրագործման ընթացքի ծալքերը, հետեւանքները այլեւ որոնել այն սխալները, որոնք Հայերս թոյլ ենք տուել սխալներ, որոնք պայմաններ են ստեղծել ցեղասպանութեան վերաւորութիւնը իրականութեան վերածելու գործում: Այսօր, ցեղասպանութեան ղէմ պայքարի, դարաբաղեան շարժման դասերի լոյսի տակ համաշխարհային շափերի հասած հայասիրութեան առկայութեան եւ նոր մտածողութեան ծաւալման պայմաններում մենք պէտք է աւելի համարձակորէն դիմենք ինքնաքննադատութեան: Անհրաժեշտ է ընդգծել, որ մեր սխալները չէին կարող ցեղասպանութեան պատճառը, շարժիչ ուժը, դրդապատճառը դառնալ: Նրանք կարող էին միայն ցեղասպանութեան ծրագրի ուժեղացման կամ թուլացման, ցեղասպանութեան իրականացման տակտիքայի ու ձեւերի վրայ ազդել:

Տարբեր առիթներով որպէս Հայերիս թերութիւն մատնանշուել է եւրոպական (օտար) գաղափարներով հրապուրուելը, օտար պետութիւնների վրայ յոյս դնելը, թրքական բարեփոխող շարժումների հետ համագործակցութեան բացակայութիւնը, Հայ դիւանագիտութեան թուլութիւնը, միասնութեան բացակայութիւնը, կանխարգելակիչ միջոցառումների անբաւարարութիւնը եւ նոյնիսկ ազատագրական շարժումը որպէս փրկութեան զլխաւոր ազդակ ընդունելը:

Առաջաւոր գաղափարները երբեք սահմաններ չեն ճանաչուել: Միայն ներազգային իմացական արժէքները (Շար.ը տեսնել 12րդ էջ)



ԱՐՑԱՆ — Ստեփանակերտի համապատկերը:

ՄԵՌԱԾՆԵՐԸ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄ

(Շար. 8րդ էջէն)

րով ղեկավարուելու կոչ են արել նեղ կարկինով ու ազգային սնապարծութեամբ ղեկավարուող ուժերը: Ընդհանրապես, որ 17րդ դարից դանդաղորէն ծաւալուող թուրքական ռիֆորմիզմի հետ հայերի կապը թոյլ է եղել: Բայց նոր Օսմանները եւ յատկապէս երիտթուրքերի շարժման ակտիւորէն մասնակցել են ինչպէս արարներ, աղուանները, բուլկարները, յոյները, այնպէս էլ հայերը: Այդ չխնդարեց, որ ամենակազմակերպուած, ամենաարմատական, ամենադաժան, ամենամասսայական պետական ցեղասպանութիւնը կազմակերպուի երիտթուրքերի կողմից: Բուլղարներին, յոյներին, արարներին, ալբաններին, հարաւսլաւներին եւ այլոց նուիրումը ազատագրական պայքարին արդարացնել պարզապէս այն պատճառով, որ նրանց պայքարը եղեռնով չաւարտուեց, իսկ հայկականը սխալ համարել, քանի որ այն իր նպատակին չհասաւ, գիտական հիմնաւորուածութիւնից զուրկ է: Դա պարզապէս տարբերակն է այն մէկին, որ յաղթողին չեն դատում:

Մեր գլխաւորը բաց թողումներից մէկը կարելի է համարել այն, որ հայ կեանքի ուսումնասիրութեան ու կառավարման ընթացքում անհրաժեշտը ուշադրութիւն չենք դարձրել նրա կազմակերպութեան թեւեւ բնոյթի ու առանձնայատկութիւնների վրայ: Այն յատկապէս անհրաժեշտ էր, քանի որ հայ կեանքը ընդգրկում է բազմաբնոյթ ընթացքներ, մշակութային շրջաններ եւ աշխարհագրական գոտիներ: Ընդհանրականը եւ բազմազանը փոխադարձաբար ազդել են իրար վրայ, բայց երբեք մեկուսացրուած, որպէս բացարձակ արժէք գոյութիւն չեն ունեցել: Բազմազանութեամբ հրապուրուողները վերջի վերջոյ իրար

են հակադրել հայ կեանքի բազմաբարձրութեամբ: Ընդհատականը բացարձականացնողները անտեսել են տեղական պայմանները եւ մատնուել նոյն անյաջողութեան:

Հայ պատմութիւնը ցոյց է տալիս, որ մենք յաճախ գերազանահատել ենք այս կամ այն հաւանական ուժի կամ դաշնակցի տեղն ու դերը: Մոռացել ենք համաշխարհային դիւանագիտութեան պատմութեամբ ապացուցուած այն դրոյթը, որ միագիծ արեւելումը յղի է լուրջ վտանգներով: Ոչ թէ մէկ ճանապարհն է դէպի Հոռոմ տանում, այլ բոլոր ճիշդ ընտրուած ուղիները: Մենք մտածել ենք «կամ կամ» բանաձեւով. կամ արեւելեան կամ արեւմտեան եւ կամ էլ թուրքական արեւելում: Ինչո՞ւ հնարաւոր չենք համարել «եւ եւ» բանաձեւը: Ինչո՞ւ հնարաւոր չէ մշակել մի այնպիսի ճկուն դիրքորոշում, որ իր մէջ ներգրաւելով երեքն էլ՝ իւրաքանչիւր պատեհ պահին հնարաւորութիւն ընձեռնէր հաւաքուելու այս կամ այն ուղղութեամբ: Այդպիսի ճկուն դիրքորոշում մշակեց Մուսթաֆա Գեմալը եւ կարողացաւ բաժան-բաժան եղած ու մեռած թուրքիան դարձնել թուրքական արդի հանրապետութիւնը:

Անկախ Հայաստանի ստեղծումը ձեռնադրել էր երեք կողմերի համար էլ, քանի որ եթէ պատմական Հայաստանի տարացքում հաստատուէր հայ պետականութիւն, Ռուսաստանը պէտք է գիջէր ռուսահայաստանը, թուրքիան՝ թուրքահայաստանը: Պաշտօնական Հայաստանում ստեղծուած պետութիւնը բնականաբար ձեռք էր բերելու գէոփոլիտիկական եւ ստրատիգիական ուժեղ դիրք եւ ունենալու էր Միջին եւ Մերձաւոր Արեւելքի վրայ ազդելու մեծ հաւանականութիւն: Նա կարող էր խանգարել նաեւ ռուսներին եւ

թուրքներին իրար դէմ հրահրելու եւրոպական դիւանագիտութեան ծրագրերին: Բայց միւս կողմից ամէն մէկը շահագրգռուած էր հայկական քարդի օգտագործմամբ: Ռուսաստանը ձգտում էր այն ուղի թուրքիայի դէմ, թուրքիան՝ Ռուսաստանի դէմ, իսկ Եւրոպան՝ այդ երկուսի դէմ:

Ինչու՞ Միքայէլ Նալպանտեանը գիտակցում էր, որ հայկական ազատագրական շարժումը պէտք է դաշնակցի ժամանակաշրջանի բոլոր առաջատար հոսանքների հետ, բայց կուլ չգնալ նրանց: Այդ ոգով նա առաջարկում էր հայերին դաշնակցել հակազաղութատիրական ուժերին, ռուսական, իտալական եւ հնդկական ազատագրական շարժումներին՝ չկորցնելով հայկական դիմագիծը: Նա ձգտում էր միացնել ռուսահայութիւնը, թուրքահայութիւնը եւ գաղութահայութիւնը:

Հաւանաբար մեր սխալը ոչ թէ ազատութեան համար պայքարելու մէջ է, այլ ազատութեան համար պայքարող բոլոր ուժերի միացեալ ճակատ կազմելու ուղղութեամբ շմտահոգուելու մէջ է: Իրար հետ բռունցք կազմած հակասումանեան ուժերից իւրաքանչիւրը կը կարողանար խուսափել իրեն բաժին հասած բռնագաղթը, ջարդը, իրաւազրկումը: Ղարաբաղեան շարժումը ապացուցեց, թէ ինչպիսի դրական արդիւնքների կարելի է հասնել, եթէ միանան համանման նպատակներ հետապնդող տարբեր ազգերի ուժերը: Սուլթանիթը չէր լինի, եթէ նման համախմբումը իրականացուէր աւելի վաղ:

Մեր մոլորակի բոլոր բնակիչների կամքն է արմատախիլ անել բռնագաղթը, ցեղասպանութիւնը, ազգերի իրաւազրկումն ու ազգային խտրականութիւնը: Համաշխարհային կապոյտը այդ երազանքի ֆոնի վրայ սարսափելի պղծաբար է երեւում Օսմանեան, ֆաշիստական, պոլպոտական եղեռնագործութեան գիծը շարունակող Սուլթանիթի, Ազգամի,

Կիրովականի, Շուշի եւ այլ նման դէպքերը: Պարսկական, բիւզանդական, խալիֆայական, Օսմանեան, ցարական եւ ստալինեան փորձը ապացուցում է որ բռնութիւնն ու հայասպանութիւնը Հայկական Հարցը լուծելու բանալին չէ: Ինչքան մարդկութիւնը աւելի քաղաքակիրթ է դառնում, այնքան հաստատուում է սոյն ճշմարտութեան անվիճելիութիւնը:

Այսօրուայ Ապրիլի 24ի մեր ծագկեփնջերը յաւերժացնելով մեր նահատակների սուրբ յիշատակն ու պատգամը, միաժամանակ նրանք բուրում են գարուն ապագան, որը հանգրուանն է միասնականութեան, վճռականութեան, կազմակերպութեան, առարկայական մտածողութեան, բարեկամութեան եւ համագործուած աշխատանքի շաւիղների: Ծագկեփնջերը այսօր հերքում են դարձել ճառամոլութեան, ինքնահաքականութեան, խմբային կամ անձնական եսամոլութեան ու սնափառութեան եւ գործնական պահանջատիրութեանն անյարիր բոլոր դիւանագիտական մարզանքների:

Այսօր մենք խնկարկում ենք մեր դարաւոր ազատագրական պայքարի հերոսների յիշատակը, յիշատակում ենք հայու դիմագիծը պահպանելու ճանապարհին ջարդուած մարտիրոսներին, ողբում ենք հայու քաղաքական մտածողութիւնը փորձարկող Սուլթանիթի ողջակիցուածներին եւ սգում երկրաշարժի հազարաւոր զոհերին:

Յիշելով, իմաստաւորելով պատմութիւնը եւ սովորելով նրա դասերից մենք նախապայմանն ենք ստեղծում մեր կատարելագործման առաջընթացի եւ յաւերժացման: Անմահացնելով մեր երախտաւորներին, մենք անմահացնում մենք ինքներս մեզ Եւ որպէս անհատ եւ որպէս հաւաքականութիւն: Արդարացի է Եղիշէն, երբ պնդում է, որ մեռածները դաստիարակում ու յաւերժացնում են ապրողներին: